



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ 16(330) 12.09.2017թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
176	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 865-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 595-Ն որոշումը.....	3
177	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի շարքերում զինվորական ծառայություն անցնող զինծառայողների կողմից բնակելի տարածության վարձակալության համար դրամական փոխհատուցման մասին» ԼՂՀ կառավարության N 605-Ն որոշումը.....	5
178	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Շուշիի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» ԼՂՀ կառավարության N 620-Ն որոշումը.....	9
179	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի N 501-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 624-Ն որոշումը.....	11
180	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 865-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 629-Ն որոշումը.....	14
181	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման 2017 թվականի հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» ԼՂՀ կառավարության N 641-Ն որոշումը.....	16
182	«Աշխատանքային օրը տեղափոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 646-Ն որոշումը.....	18
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
183	«Արցախի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 69-րդ, 71-րդ և 106-րդ հոդվածների վերաբերյալ» ԱՀ դատարանների նախագահների խորհրդի N 9 որոշումը.....	19

184	«Արցախի Հանրապետության դատարանների կողմից պետական տուրքի գանձման դատական պրակտիկայի մասին» ԱՀ դատարանների նախագահների խորհրդի N 10 որոշումը.....	21
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
185	ԼՀՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ 2656/02/16թ. որոշումը.....	29

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

16 օգոստոսի 2017թ.

N 595-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է***:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 865-Ն որոշման N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ
 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿԻ
 ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Իննամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՄԵՐ	-	-	-	-
			այդ թվում՝				
09			ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	-	-	-	-
	6		Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	-	-	-	-
		1	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	-	-	-	-
		02	Դասագրքերի ձեռքբերում	-	-	(26.896.5)	(26.896.5)
			ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն	-	-	(26.896.5)	(26.896.5)
		11	Կենտրոնացված կարգով դասամատյանների և կավճի ձեռքբերում	-	-	1.495.0	1.495.0
			ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն	-	-	1.495.0	1.495.0
		12	Կենտրոնացված կարգով կրթական հաստատությունների համար գույքի ձեռքբերում	-	-	25.401.5	25.401.5
			ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն	-	-	25.401.5	25.401.5

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ԴԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

18 օգոստոսի 2017թ.

N 605-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԲԱՆԱԿԻ ՇԱՐՔԵՐՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆՈՂ
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ա թ ղ ու մ է.**

1. Սահմանել՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի շարքերում զինվորական ծառայություն անցնող զինծառայողների կողմից բնակելի տարածությունների վարձակալության համար դրամական փոխհատուցման վճարման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի շարքերում զինվորական ծառայություն անցնող զինծառայողների (այսուհետ՝ զինառայողներ) կողմից բնակելի տարածությունների վարձակալության համար դրամական փոխհատուցումը տրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված գումարներից.

2) զինծառայողների բնակելի տարածությունների վարձակալության համար դրամական փոխհատուցումը տրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի կենտրոնական բնակկենցաղային հանձնաժողովի կողմից ներկայացված ցուցակների համաձայն:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ սույն որոշմամբ սահմանված՝ զինծառայողների վարձավճարների փոխհատուցման ֆինանսավորումն իրականացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից ներկայացված հայտերի համաձայն:

4. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը հանձնարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի սեպտեմբերի 1-ից:

**ԼԵՌԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ր Գ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԲԱՆԱԿԻ ՇԱՐՔԵՐՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆՈՂ
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի շարքերում զինվորական ծառայություն անցնող զինծառայողների (այսուհետ՝ զինառայողներ) կողմից վարձակալված բնակելի տարածությունների դիմաց դրամական փոխհատուցում տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի գործողությունը տարածվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի 59703, 38401, 36534, 35383, 34153, 49971, 33651, 38862 գորամասերում զինվորական ծառայություն անցնող սպայական կազմի ու նրանց ընտանիքների անդամների վրա:

3. Սույն կարգի համաձայն զինծառայողների ընտանիքի անդամ են համարվում՝

1) ամուսինը և 18 տարին չլրացած երեխաները.

2) համատեղ բնակվող՝ անգործունակ ճանաչված կամ մինչև 23 տարեկան ուսանող զավակները, ինչպես նաև՝ համատեղ բնակվող 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ զավակները, եթե հաշմանդամ են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը:

4. Սույն կարգի համաձայն՝ վարձակալված բնակելի տարածությունների դիմաց դրամական փոխհատուցում ստանալու իրավունք ունեն այն զինծառայողները, ում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի կենտրոնական բնակկենցաղային հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) որոշման համաձայն բնակելի տարածության վարձակալության համար տրվում է դրամական փոխհատուցում:

5. Բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցումը վճարվում է յուրաքանչյուր ամիս՝ բնակելի տարածության վարձակալության պայմանագրում նշված գումարի չափի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի կողմից փոխհատուցվող գումարի չափի տարբերությամբ, բայց ոչ ավելի, քան՝

1) Ստեփանակերտ քաղաքում՝

ա. չորս և ավելի անձից բաղկացած զինծառայողի ընտանիքին՝ 32 000 ՀՀ դրամ,
բ. երկու և երեք անձից բաղկացած զինծառայողի ընտանիքին՝ 33 000 ՀՀ դրամ.

2) այլ քաղաքներում և բնակավայրերում՝

ա. չորս և ավելի անձից բաղկացած զինծառայողի ընտանիքին՝ 17 000 ՀՀ դրամ,
բ. երկու և երեք անձից բաղկացած զինծառայողի ընտանիքին՝ 23 000 ՀՀ դրամ:

6. Բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցման չափը կարող է փոփոխվել զինծառայողների դիմումի հիման վրա կամ հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ զինծառայողների ընտանիքի անդամների թվի ավելանալու կամ նվազելու դեպքում՝ հանձնաժողովի որոշմամբ՝ հաշվի առնելով սույն կարգի 3-րդ և 5-րդ կետերի պահանջները:

7. Բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցումը վճարվում է հանձնաժողովի որոշմամբ սահմանված օրվանից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

29 օգոստոսի 2017թ.

N 620-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՇՈՒՇԻԻ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի և «Նախադպրոցական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը *ն ք ն շ ու մ է*:

1. Հիմնադրման միջոցով ստեղծել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Շուշիի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

2. Սահմանել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Շուշիի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության առարկան և նպատակը նախադպրոցական կրթական բնույթի գործառույթների իրականացումն է:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Շուշիի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման, ինչպես նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «գ», «դ», «ե», «է» կետերով և 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի վարչակազմին:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի վարչակազմի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում՝

1) հաստատել՝

ա. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Շուշիի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպության սեփականության իրավունքով հանձնվող և անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող գույքի կազմը,

բ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Շուշիի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 27-ի N 131 որոշմամբ հաստատված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական նախադպրոցական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը և այն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:

2) ձևավորել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Շուշիի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման մարմինը և ապահովել նրա գործունեությունը:

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի N1 հավելվածի 09 բաժնի 1 խմբի 1 դասի «03 Նախադպրոցական հիմնարկներ» ծրագրով նախատեսված գումարից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի վարչակազմին 2017 թվականին հատկացնել 15 337 300 (տասնհինգ միլիոն երեք հարյուր երեսունյոթ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ գումար՝ այդ թվում ինն ամսում՝ 4 236 200 (չորս միլիոն երկու հարյուր երեսունվեց հազար երկու հարյուր) ՀՀ դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 451100 «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին» հոդվածով) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Շուշիի պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպության չորս ամսվա պահպանման ծախսերն իրականացնելու համար:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

30 օգոստոսի 2017թ.

N 624-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N 501-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **առ ոչ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 29-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ջրախնայողական տեխնոլոգիաների ներդրման խթանման ծրագիրը հաստատելու մասին» N 501-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

9. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) համակարգում և վերահսկում է Ծրագրի իրականացման գործընթացը:

10. Հողօգտագործողները նախարարության կողմից սահմանված ժամկետում նախարարություն են ներկայացնում հայտ՝ համաձայն ձևի՝ նշելով ջրախնայողական տեխնոլոգիաների տեղադրման հնարավորությունները և պայմանները, գյուղատնտեսական նշանակության հողատարածքի նկատմամբ սեփականության, վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականների (այսուհետ՝ վկայական), իսկ վերաբնակեցման տարածքներում վկայականի բացակայության դեպքում համայնքի ղեկավարի կողմից տրված համապատասխան տեղեկանքի և անձնագրերի պատճենները:

Ծրագրից օգտվելու համար պարտադիր պայման է հանդիսանում մեկ կուլտուրայի հաշվով նվազագույնը 1 հեկտար մակերեսով հողատարածքի համար ջրախնայողական տեխնոլոգիաների տեղադրման նպատակով հայտի ներկայացումը:

11. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամանով ջրախնայողական տեխնոլոգիաներ տեղադրելու նպատակով նախարարություն դիմած հողօգտագործողների ներկայացրած հայտերի ուսումնասիրման, բազմամյա տնկարկների (պտղատու այգիներ) դեպքում ջրախնայողական տեխնոլոգիաների տեղադրման համար 50 տոկոսի չափով անհատույց և 50 տոկոսի չափով անտոկոս փոխառությամբ, իսկ

միամյա մշակաբույսերի (ծխախոտ, բանջարաբոստանային կուլտուրաներ և այլն) դեպքում՝ 50 տոկոսի չափով անտոկոս փոխառությամբ (մնացած 50 տոկոսի չափով աշխատանքները պետք է իրականացվեն հողօգտագործողների կողմից) տրամադրված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման և իրականացրած աշխատանքների հետագա վերահսկման նպատակով ստեղծվում է մշտական հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):

12. Հանձնաժողովը հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո տասնհինգօրյա ժամկետում ստուգում է ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը, ջրախնայողական տեխնոլոգիաներ տեղադրելու հնարավորությունները և պայմանները, տվյալ հողատարածքում ռոռզման ջրի առկայությունը, ջրախնայողական տեխնոլոգիաների ներդրման արդյունավետությունը և այդ պահանջները բավարարող հողօգտագործողների համար սահմանում է ժամկետ՝ ջրախնայողական տեխնոլոգիաների տեղադրման նախագծանախահաշվային փաստաթղթերը (այսուհետ՝ փաստաթղթեր) նախարարություն ներկայացնելու համար:

Ներկայացված փաստաթղթերը ենթարկվում են փորձաքննության՝ պետական բյուջեով այդ նպատակով նախատեսված միջոցներով:

13. Հանձնաժողովը փորձաքննության արդյունքների հիման վրա տասնօրյա ժամկետում ընդհանրացնում և՝

1) տալիս է եզրակացություն, միաժամանակ նախարարություն ներկայացնելով առաջարկություն՝ դրական եզրակացություն ստացած հողօգտագործողների ֆինանսավորման մասին նշելով անհատույց տրամադրման ենթակա ֆինանսական միջոցների չափը:

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ (այսուհետ՝ հիմնադրամ) է ներկայացնում դրական եզրակացություն ստացած հողօգտագործողների ցանկը, նշելով անտոկոս փոխառությամբ տրամադրման ենթակա գումարը և այդ գումարի՝ մշակվող կուլտուրայի յուրահատկություններից կախված, պետական բյուջե վերադարձման ժամկետները՝ ջրախնայողական տեխնոլոգիաների տեղադրման համար անհրաժեշտ գումարի անտոկոս փոխառության տեսքով տրամադրումն (այսուհետ՝ գործընթաց) ապահովելու նպատակով:

14. Նախարարությունը դրական եզրակացություն ստացած հողօգտագործողների հետ կնքում է ֆինանսական միջոցների անհատույց տրամադրման պայմանագրեր՝ նախատեսելով ջրախնայողական տեխնոլոգիաների տեղադրման աշխատանքների կատարման պայմանները և ժամկետները սահմանող դրույթներ, իսկ հիմնադրամը հանձնաժողովի կողմից ներկայացված ցանկի հիման վրա ապահովում է գործընթացի իրականացումը՝ հողօգտագործողների հետ կնքելով անտոկոս փոխառության պայմանագրեր:

15. Ֆինանսական միջոցները տրամադրվում են փաստաթղթերով նախատեսված կաթիլային կամ անձրևացման ռոռզման համակարգերի արժեքի՝

1) բազմամյա տնկարկների (պտղատու այգիներ) դեպքում 50 տոկոսի չափով անհատույց՝ նախարարության կողմից, և 50 տոկոսի չափով անտոկոս փոխառության տեսքով՝ հիմնադրամի միջոցով:

2) միամյա մշակաբույսերի (ծխախոտ, բանջարաբոստանային կուլտուրաներ և այլն) դեպքում՝ 50 տոկոսի չափով անտոկոս փոխառության տեսքով՝ հիմնադրամի միջոցով (մնացած 50 տոկոսի չափով աշխատանքները պետք է իրականացվեն հողօգտագործողների կողմից):

16. Հիմնադրամը սույն Ծրագրի 14-րդ կետում նշված գործողությունները կատարելուց հետո, տասնհինգօրյա ժամկետում նախարարություն է ներկայացնում տեղեկություններ կատարած աշխատանքների մասին:

Նախարարությունը սույն Ծրագրի 14-րդ կետում նշված գործողությունների ավարտից հետո և հիմք ընդունելով սույն Ծրագրի 16-րդ կետի 1-ին պարբերությունում նշված տեղեկությունները՝ կազմակերպում է մասնագիտական որակավորում ունեցող անձի կողմից պայմանագրային հիմունքներով օբյեկտի շինման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցումը՝ պետական բյուջեով նախատեսված միջոցներով:

17. Անհատույց և անտոկոս փոխառությամբ տրամադրված ֆինանսական միջոցների ոչ նպատակային օգտագործման դեպքում դրանք ենթակա են վերադարձման պետական բյուջե, ընդ որում՝ անտոկոս փոխառությամբ տրամադրված ֆինանսական միջոցները վաղաժամկետ:

18. Սույն Ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է սվյալ տարվա պետական բյուջեով «Գյուղատնտեսական միջոցառումների իրականացման ծրագրեր» ծրագրի «Ջրախնայողական տեխնոլոգիաների ներդրման խթանում» միջոցառմամբ նախատեսված միջոցներով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի մարտի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

1 սեպտեմբերի 2017թ.

N 629-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵՆՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
26-Ի N865-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **առաջում է**:

1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 865-Ն որոշման N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի հուլիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
 Լեռնային Ղարաբաղի
 Հանրապետության կառավարության
 2017 թվականի սեպտեմբերի 1-ի N 629-Ն որոշման

**«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
 ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1
 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ
 ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ
 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿԻ
 ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ.դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	-	-	-	-
			այդ թվում՝				
01			ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՑԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	-	(450,000.0)	(370,000.0)
	7		Պետական պարտքի գծով գործառնություններ	-	-	(450,000.0)	(370,000.0)
		1	Պետական պարտքի գծով գործառնություններ	-	-	(450,000.0)	(370,000.0)
		01	Ներգրավված փոխառու միջոցների սպասարկման ծախսեր (տոկոսավճարներ)	-	-	(450,000.0)	(370,000.0)
			ԼՂՀ ֆինանսների նախարարություն	-	-	(450,000.0)	(370,000.0)
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶՂԱՍՎՈՂ ԾԱԽՍԵՐ	-	-	450,000.0	370,000.0
	2		Այլ ծախսեր	-	-	450,000.0	370,000.0
		1	Այլ ծրագրեր	-	-	450,000.0	370,000.0
		02	Կապիտալ ներդրումներ	-	-	370,000.0	370,000.0
			ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն	-	-	370,000.0	370,000.0
		06	Գույքի գնման ծախսեր	-	-	80,000.0	-
		1	ԼՂՀ կառավարություն	-	-	80,000.0	-

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ԴԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

5 սեպտեմբերի 2017թ.

N 641-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ
ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ (ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ) ՄԱՍԻՆ

Համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 27-ի N 172 որոշմամբ հաստատված կարգի պահանջների՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը)՝ 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետին՝ իրենց կողմից կատարվող աշխատանքների արդյունքում հողային ֆոնդի կազմում տեղի ունեցող փոփոխությունները (բազմամյա տնկարկների հիմնում, նոր հողերի իրացում, ոռոգվող հողերի նոր ելքեր, անտառների հիմնում և այլ փոփոխություններ) ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներին, համապատասխան համայնքների ղեկավարներին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմ՝ հողերի ընթացիկ հաշվառումն իրականացնելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ
ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքը, այդ թվում՝	հազար հեկտար, որից ոռոգվող	
	1143,27	14,6737
1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային ֆոնդն՝ ըստ նպատակային նշանակության՝		
ա. գյուղատնտեսական նշանակության հողեր, որից՝	592,3637	14,4338
վարելահողեր	142,4463	11,8962
բազմամյա տնկարկներ	9,4913	0,9061
խոտհարքներ	35,2884	
արոտներ	373,2243	0,8561
այլ հողատեսքեր	31,9134	0,7754
բ. բնակավայրերի հողեր, որից՝	27,5003	0,24
տնամերձ և այգեգործական (ամառանոցային) հողեր	17,5271	0,24
գ. արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր	4,9971	
դ. եներգետիկայի, տրանսպորտի, կապի կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր	3,5191	
ե. հատուկ պահպանվող տարածքների հողեր	5,2140	
զ. հատուկ նշանակության հողեր	40,9263	
է. անտառային հողեր, որից՝	460,9361	
անտառ	258,84410	
թվուտ	140,1948	
խոտհարք	0,04145	
արոտ	39,40570	
այլ հողատեսքեր	22,45000	
ը. ջրային հողեր	5,451150	
թ. պահուստային հողեր	2,362300	
2) հողային ֆոնդն՝ ըստ սեփականության սուբյեկտների՝		
ա. քաղաքացիների	39,6309	0,2281
բ. իրավաբանական անձանց	2,0381	
գ. համայնքային	150,0522	0,6554
դ. պետական	924,9826	13,7902
ե. օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձանց	0,4426	

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵՎԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

11 սեպտեմբերի 2017թ.

N 646-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածը և «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է**:

1. 2017 թվականի սեպտեմբերի 18-ի աշխատանքային օրը տեղափոխել 2017 թվականի սեպտեմբերի 23-ը՝ շաբաթ օրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ
ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ № 9

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ
69-ՐՂ, 71-ՐՂ ԵՎ 106-ՐՂ ՀՈԴԿԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

Ուսումնասիրելով ԱՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ, 71-րդ և 106-րդ հոդվածների վերաբերյալ խորհրդատվական բնույթի պարզաբանում տրամադրելու վերաբերյալ ԱՀ Գերագույն դատարանի նախագահի կողմից ԱՀ դատական օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետի հիման վրա ներկայացված դիմումը՝ ԱՀ դատարանների նախագահների խորհուրդը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

1. ԱՀ դատարանների նախագահների խորհրդին հասցեագրած իր դիմումում ԱՀ Գերագույն դատարանի նախագահը նշել է, որ քաղաքացիական գործերով դատական պրակտիկայի ուսումնասիրման և ամփոփման արդյունքում պարզվել է, որ ծնողից երեխայի օգտին ալիմենտի բռնագանձման գործերով դատական պրակտիկայում առկա է ԱՀ օրենսդրության ոչ միատեսակ կիրառում:

2. ԱՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ և 71-րդ հոդվածները նախատեսում են դատական կարգով երեխայի համար ալիմենտի բռնագանձման 3 եղանակ՝ ծնողի վաստակից բաժնային հարաբերակցությամբ, կայուն դրամական գումարով, կայուն դրամական գումարով և բաժիններով միաժամանակ:

Կայուն դրամական գումարով կամ կայուն դրամական գումարով և բաժիններով միաժամանակ ալիմենտ դատարանն իրավունք ունի սահմանել, եթե ծնողների վաստակից և (կամ) այլ եկամտից բաժնային հարաբերակցությամբ ալիմենտի բռնագանձումն անհնար կամ դժվար է կամ էլ էականորեն վնասում է ստացողներից որևէ մեկի շահերը, ինչպես նաև այն դեպքերում, երբ երեխաների համար ալիմենտ վճարելու պարտականություն ունեցող ծնողը ստանում է ոչ կանոնավոր կամ փոփոխվող վաստակ և (կամ) այլ եկամուտ, վաստակ և (կամ) այլ եկամուտ է ստանում բնամթերքի տեսքով կամ արտարժույթով, վաստակ և (կամ) այլ եկամուտ չի ստանում կամ չունի:

Մակայն, դատական պրակտիկայում խնդիրներ են առաջանում այն դեպքերում, երբ դատարանի վճռով ալիմենտ սահմանվելուց հետո հանգամանքները փոխվում են, օրինակ՝ ի հայտ են գալիս ԱՀ ընտանեկան օրենսգրքի 71-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված այնպիսի հանգամանքներ, որոնց առկայության պարագայում օրենսդրությամբ նախատեսվում է ալիմենտի վճարման այլ եղանակ:

Այս հարցի շուրջ ԱՀ դատական պրակտիկայի ամփոփումը ցույց է տվել, որ վերոնշյալ դեպքերում ալիմենտի վճարման եղանակի փոփոխությունը դիտվում է որպես ալիմենտի չափի փոփոխություն, և այդ հարաբերությունների նկատմամբ կիրառվում է ԱՀ ընտանեկան օրենսգրքի 107-րդ հոդվածը, համաձայն որի՝ ալիմենտի սահմանված չափը կարող է փոխվել միայն երկու պայմանների՝ կողմերից մեկի գույքային և ընտանեկան դրության միաժամանակյա փոփոխության պարագայում:

Մակայն, ալիմենտի վճարման եղանակի փոփոխությունը և ալիմենտի չափի փոփոխությունը տարբեր հասկացություններ են: Ալիմենտի վճարման եղանակի փոփոխությունը կախված է ալիմենտ վճարողի բնակության վայրի, եկամտի ձևի փոփոխությունից և այլ հանգամանքներից, իսկ չափի փոփոխության համար անհրաժեշտ է կողմերից մեկի գույքային և ընտանեկան դրության միաժամանակյա փոփոխություն:

Ալիմենտի վճարման եղանակի փոփոխությունը երբեմն կարող է հանգեցնել նաև չափի փոփոխության, բայց դա ալիմենտի վճարման եղանակի փոփոխության հետևանք է, այլ ոչ թե ալիմենտի չափի փոփոխություն, քանի որ միշտ չէ, որ վճարման եղանակի փոփոխությունը հանգեցնում է չափի փոփոխության:

Ալիմենտի վճարման եղանակի փոփոխության կարգը ԱՀ ընտանեկան օրենսդրությամբ ուղղակիորեն ամրագրված չէ: Մակայն ԱՀ ընտանեկան օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ եթե ընտանիքի անդամների միջև հարաբերությունները կարգավորված չեն ընտանեկան օրենսդրությամբ, ապա նման հարաբերությունների նկատմամբ կիրառվում են նույնպիսի հարաբերությունները կարգավորող ընտանեկան իրավունքի նորմերը: ԱՀ ընտանեկան օրենսգրքի 106-րդ հոդվածում նշված է, որ շահագրգիռ անձը կարող է դիմել դատարան՝ ալիմենտի չափը կայուն դրամական գումարով որոշելու կամ այլ եղանակով ալիմենտ վճարելու մասին պահանջով, եթե ալիմենտ վճարելու պարտավոր անձը մշտական բնակության համար մեկնում է օտարերկրյա պետություն:

Այսպիսով, ԱՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ և 71-րդ հոդվածներով նախատեսված ալիմենտի վճարման եղանակների փոփոխության վերաբերյալ իրավական նորմերի բացակայության պայմաններում այդ հարաբերությունների նկատմամբ կարող է կիրառվել ԱՀ ընտանեկան օրենսգրքի 106-րդ հոդվածում ամրագրված իրավունքի նորմը, և ալիմենտ վճարելու եղանակը կարող է փոխվել բոլոր այն դեպքերում, երբ ի հայտ են գալիս այնպիսի հանգամանքներ, որոնց առկայության պարագայում օրենսդրությամբ նախատեսվում է ալիմենտի վճարման այլ եղանակ:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը, նպատակ ունենալով ապահովելու օրենսդրության ճիշտ և միատեսակ կիրառումը՝ Արցախի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը՝

Պ Ա Ր Ջ Ա Բ Ա Ն ՈՒ Մ Է

Շահագրգիռ անձի դիմումով դատարանն ալիմենտի վճարման եղանակը փոփոխում է ոչ միայն այն դեպքում, երբ ալիմենտ վճարելու պարտավոր անձը մշտական բնակության համար մեկնում է օտարերկրյա պետություն, այլ նաև այն դեպքերում, երբ բաժնով ալիմենտ վճարող ծնողն ազատվում է աշխատանքից կամ կայուն դրամական գումարով ալիմենտ վճարող ծնողն ընդունվում է աշխատանքի կամ էլ ի հայտ են գալիս ԱՀ ընտանեկան օրենսգրքի 71-րդ հոդվածով նախատեսված այլ հանգամանքներ:

**ԱՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ**

25 օգոստոսի 2017թ.

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ
ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ № 10

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԱՆՁՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ
ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ**

Արցախի Հանրապետության դատարաններում պետական տուրքի չափը սահմանելու, դրա հաշվարկման և գանձման, պետական տուրք վճարողների իրավունքների և պարտականությունների, պետական տուրքի դրույքաչափերի, պետական տուրքի գծով արտոնությունների սահմանման՝ վճարումից ազատման, նվազեցման, դրույքաչափի նվազեցման, վճարման ժամկետի հետաձգման, ինչպես նաև պետական տուրքի վերադարձման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» ԱՀ օրենքի, ԱՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի և ԱՀ վարչական դատավարության օրենսգրքի դրույթներով:

Դատական պրակտիկայի ամփոփումը ցույց տվեց, որ այս նորմատիվ իրավական ակտերի դրույթները ամբողջովին չեն կարգավորում ԱՀ դատարաններ ներկայացվող հայցադիմումների, դիմումների, դատական ակտերի դեմ բերվող վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար գանձվող պետական տուրքի հետ կապված հարաբերությունները:

Պետք է արձանագրել, որ պետական տուրքի հետ կապված հարցերում դատական պրակտիկան դեռևս միատեսակ չէ, քանի որ որոշակի հարաբերություններ դեռևս կարգավորված չեն: Այս պայմաններում, հաշվի առնելով իրավակիրառ պրակտիկայում իրավական նորմերի միատեսակ կիրառման անհրաժեշտությունը և նպատակ ունենալով վերացնել պետական տուրքի և փաստաթղթերի պատճեններ տալու համար վճարների գանձման կապակցությամբ դատական պրակտիկայում առկա հակասությունները, ԱՀ Գերագույն դատարանի նախագահը, հիմք ընդունելով ԱՀ դատական օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետը, դիմել է ԱՀ դատարանների նախագահների խորհրդին՝ առաջարկելով վերոնշյալ հարցերի կարգավորման առնչությամբ ԱՀ դատարաններին տալ խորհրդատվական բնույթի պարզաբանումներ:

Վերոգրյալի հիման վրա Արցախի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Քաղաքացիական և վարչական դատավարությունների ընթացքում պետական տուրքի վերաբերյալ հարցերը միատեսակ լուծելու նպատակով դատարաններին տալ խորհրդատվական բնույթի հետևյալ պարզաբանումները.

**ՈՐՈՇԱԿԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐՈՎ
ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ**

1. Հակընդդեմ հայցադիմումի, ինչպես նաև վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի՝ գործին մասնակցելու մասին դիմումի (հայցադիմումի) համար պետական տուրքը գանձվում է հայցի

համար սահմանված կարգով՝ բացառությամբ սույն որոշման 13-րդ կետով նախատեսված դեպքերի:

Եթե նույն բողոքով դատական ակտը բողոքարկվում է և՛ հայցի, և՛ հակընդդեմ հայցի մասով, ապա պետական տուրքը գանձվում է յուրաքանչյուրի համար առանձին:

2. Մի քանի հայցվորների (համահայցվորներ) կողմից մեկ կամ մի քանի պատասխանողի (համապատասխանողներ) նկատմամբ համատեղ հայց ներկայացվելու դեպքում պետական տուրքը հաշվարկվում է՝

1) գույքային պահանջով՝ հայցագնի ընդհանուր գումարից ելնելով.

2) ոչ գույքային պահանջով՝ բազային տուրքի քառապատիկի չափով:

3. Համահայցվորների հայցապահանջից մեկ կամ մի քանի հայցվորների պահանջն առանձին վարույթով առանձնացնելու դեպքում հայցադիմումը ներկայացնելու պահին վճարված պետական տուրքը չի վերահաշվարկվում և երկրորդ անգամ պետական տուրք չի գանձվում: Այդ մասին նշվում է վարույթն առանձնացնելու մասին որոշման մեջ:

4. Մի քանի դիմումատուների՝ մեկ իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հաստատելու պահանջի մասին դիմում ներկայացնելու դեպքում պետական տուրքի գումարը գանձվում է մեկ պահանջի համար սահմանված չափով և ոչ թե բոլոր դիմումատուներից առանձին-առանձին:

5. Երբ դատարանի կողմից միննույն դիմումով, միննույն դիմումատուի պահանջով հաստատվում են մեկից ավելի փաստաթղթերի պատկանելիության կամ մեկից ավելի գույքային միավորների նկատմամբ գույքի տիրապետման փաստեր, ապա այդ դեպքում պետական տուրքը գանձվում է մեկ իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման համար սահմանված չափով:

6. Միաժամանակ և՛ գույքային, և՛ ոչ գույքային պահանջ պարունակող հայցադիմում ներկայացվելու դեպքում պետական տուրքը հաշվարկվում և գանձվում է յուրաքանչյուր պահանջի համար առանձին:

7. Երկու և ավելի ոչ գույքային պահանջ պարունակող հայցադիմում ներկայացվելու դեպքում պետական տուրքը գանձվում է յուրաքանչյուր պահանջի համար առանձին:

8. Մի քանի կետից բաղկացած վարչական ակտի վիճարկման կամ մի քանի կետից բաղկացած պայմանագիրն անվավեր ճանաչելու հայցերով պետական տուրքը գանձվում է ոչ գույքային պահանջի համար սահմանված բազային տուրքի քառապատիկի չափով:

9. Եթե վիճարկվում է մի քանի կետից բաղկացած վարչական ակտ կամ պայմանագիր, և հայցը բավարարվել է մասնակի, օրինակ՝ մի կետի մասով, ապա պետական տուրքը գանձվում է պատասխանողից ոչ գույքային պահանջի համար՝ բազային տուրքի քառապատիկի չափով, իսկ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար՝ համաձայն «Պետական տուրքի մասին» ԱՀ օրենքի 9-րդ հոդվածի:

10. Եթե բողոքարկվում է դատական ակտը միայն դատական ծախսերի մասով, ապա ներկայացված բողոքի համար պետական տուրք չի վճարվում:

11. Ալիմենտի բռնագանձման կամ ալիմենտի չափի ավելացման վերաբերյալ հայցադիմումներ ներկայացնելու դեպքում հայցվորն օրենքի ուժով ազատված է պետական տուրքի վճարումից:

Ալիմենտի չափը նվազեցնելու հայցապահանջի համար գանձվում է պետական տուրք օրենքով սահմանված կարգով:

12. Միջանկյալ դատական ակտերի դեմ ներկայացված բողոքներով պետական տուրք չի վճարվում:

13. Վարչական գործերով վճարման կարգադրության հետ կապված հակընդդեմ հայց ներկայացնելու դեպքում՝

1) վարչական իրավախախտումների վերաբերյալ ԱՀ օրենսգրքի և այլ օրենքներով վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների կողմից ընդունված վարչական ակտի վիճարկման դեպքում պետական տուրք չի գանձվում՝ բացառությամբ առևտրային իրավաբանական անձանց հակընդդեմ հայցադիմումների:

2) այլ վարչական ակտերի վիճարկման դեպքում գանձվում է բազային տուրքի քառապատիկի չափով պետական տուրք:

ՀԱՅՏԱԳԻՆԸ

14. Եթե դատարան են ներկայացվում պարբերաբար և գործնականում անորոշ ժամկետով վճարվելիք գումարի կամ պարբերաբար հանձնվելիք գույքի պահանջներ, որոնցով հնարավոր չէ որոշել բռնագանձվող գումարի կամ գույքի ընդհանուր չափը, ապա հայցագիներ որոշվում է:

1) ալիմենտ բռնագանձելու հայցերով՝ մեկ տարվա ընթացքում կատարվելիք վճարումների հաշվարկից, իսկ եթե ալիմենտի բռնագանձման պահանջը ներկայացվել է մեկ տարուց պակաս ժամանակահատվածի համար, ապա այդ ժամանակահատվածում կատարվելիք վճարումների հաշվարկից:

2) մինչև մեկ տարի ժամկետով կատարվելիք վճարումների կամ հանձնումների հայցերով՝ այդ վճարումների կամ հանձնումների ընդհանուր հաշվարկից:

3) մեկ տարուց ավել ժամկետով, անժամկետ կամ ցմահ վճարումների կամ հանձնումների հայցերով՝ մեկ տարվա ընթացքում կատարվելիք վճարումների կամ հանձնումների հաշվարկից:

4) վճարումների կամ հանձնումների չափը պակասեցնելու կամ ավելացնելու վերաբերյալ հայցերով՝ այն գումարից, որով պակասեցվելու կամ ավելացվելու են վճարումները կամ հանձնումները, սակայն ոչ ավելի, քան մեկ տարվա հաշվարկով:

5) վճարումները կամ հանձնումները դադարեցնելու վերաբերյալ հայցերով՝ մնացած վճարումների և հանձնումների ամբողջ գումարից, սակայն ոչ ավելի, քան մեկ տարվա հաշվարկով:

15. Եթե հայցապահանջի բնույթն այնպիսին է, որ հայցադիմում ներկայացնելու պահին անհնար է որոշել հայցագնի չափը, ապա դատարանը որոշում է նախնական հայցագին և դրան համապատասխան պետական տուրքի չափ կամ նախնական գանձում է ոչ գույքային պահանջներով հայցադիմումների ներկայացման համար սահմանված չափով պետական տուրք: Այս դեպքերում դատարանը վերջնական դատական ակտով անդրադառնում է գործի քննության ընթացքում ճշգրտված հայցագնի և նախնական հայցագնի տարբերությանը և լուծում լրացուցիչ պետական տուրք գանձելու կամ վերադարձնելու հարցը:

16. «Պետական տուրքի մասին» ԱՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» ենթակետում հիշատակված վիճարկվող գումար դիտարկել:

1) հայցագինն ամբողջությամբ, երբ վերաքննիչ բողոք է ներկայացվել գույքային պահանջի գործով և բողոքում չի վիճարկվում առաջին ատյանի դատարանի դատական ակտով բավարարված կամ չբավարարված պահանջի չափը, կամ վիճարկվում է հայցապահանջն ամբողջությամբ:

2) գումարի այն չափը, որը բավարարվել կամ չի բավարարվել առաջին ատյանի դատարանի դատական ակտով, և որը վիճարկվում է վերաքննիչ բողոքում:

17. Հայցագնի մեջ չի ներառվում դատական ծախսերի գումարը:

Այն դեպքերում, երբ հայցապահանջի հետ հայցվորը միաժամանակ դատարան է ներկայացնում դատական ծախս հանդիսացող՝ փաստաբանի ծառայության գումարի բռնագանձման պահանջ, ապա դատարանը այդ գումարից չպետք է պետական տուրք գանձի:

18. ԱՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասության իրավական նորմի համաձայն՝ հայցագիրը նվազեցնելու դեպքում վճարված տուրքը չի վերադարձվում: Այս նորմը պետք է կիրառել նաև այն դեպքում, երբ պետական տուրքի գանձումը հետաձգված լինելու պայմաններում հայցագիրը նվազեցվում է, այդ դեպքում վերջնական դատական ակտով պետական տուրքը պետք է գանձել սկզբնական հայցագրի նկատմամբ հաշվարկով:

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ ԳՈՐԾԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԻՋԵՎ ԲԱՇԽԵԼԸ

19. ԱՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանի վճռի մեջ կարող են լուծվել գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման և բյուջեից պետական տուրքի վերադարձման հետ կապված հարցերը:

ԱՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ վճռի եզրափակիչ մասում լուծվում է գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման հարցը:

ԱՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշումը պետք է դրույթներ ներառի կողմերի միջև դատական ծախսերի, այդ թվում՝ առաջին ատյանի դատարանում գործի քննության հետ կապված դատական ծախսերի բաշխման մասին:

ԱՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշումը պետք է դրույթներ ներառի կողմերի միջև դատական ծախսերի, այդ թվում՝ վարչական դատարանում գործի քննության հետ կապված դատական ծախսերի բաշխման մասին:

Հիշատակված նորմերը վկայում են այն մասին, որ օրենքի տրամաբանությունն այն է, որպեսզի վերջնական դատական ակտ կայացնելիս դատարանն անդրադառնա դատական ծախսերի բաշխման և փոխհատուցման խնդրի քննարկմանը՝ անկախ գործին մասնակցող անձանց կողմից նման պահանջ ներկայացվելուց:

20. ԱՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հայցի լրիվ կամ մասնակիորեն բավարարման դեպքում հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը բավարարված հայցապահանջի չափին համամասնորեն պետք է պատասխանողից բռնագանձել հոգուտ հայցվորի: Հայցագիրը նվազեցնելու դեպքում ավել վճարված պետական տուրքի գումարը պատասխանողից չի բռնագանձվում հոգուտ հայցվորի:

21. Այն դեպքում, երբ պատասխանողն ամբողջովին ընդունում է հայցը կամ երբ պատասխանողը մասնակի ընդունում է հայցը, բայց դատարանը հայցը բավարարում է ամբողջությամբ, ապա դատարանը դատական ծախսերի բաշխման հարցը լուծելիս պետական տուրքն ամբողջությամբ պետք է բռնագանձի պատասխանողից: Իսկ այն դեպքում, երբ պատասխանողը մասնակի ընդունում է հայցը, իսկ մնացած մասով դատարանը հայցը մերժում է, ապա դատարանը

դատական ծախսերի բաշխման հարցը լուծելիս պատասխանողից պետք է բռնագանձի պետական տուրք՝ նրա ընդունած հայցի մասի չափին համապատասխան:

22. Եթե գործի քննության ընթացքում պատասխանողն ամբողջությամբ կատարել է հայցապահանջը, և այդ հիմքով հայցը մերժվել է, ապա դատարանը դատական ծախսերի բաշխման հարցը լուծելիս պետական տուրքը պետք է ամբողջությամբ բռնագանձի պատասխանողից: Իսկ եթե գործի քննության ընթացքում պատասխանողը մասնակիորեն է կատարել հայցապահանջը, և հայցն այդ մասով մերժվել է, ապա դատարանը դատական ծախսերի բաշխման հարցը լուծելիս պետական տուրքը պետք է բռնագանձի պատասխանողից՝ նրա կողմից կատարված հայցապահանջի չափին համապատասխան:

Այն դեպքում, երբ հայցվորը հայցից հրաժարվել է, քանի որ պատասխանողը հայցվորի կողմից հայցը ներկայացնելուց հետո կամավոր կատարել է հայցվորի պահանջները, պետական տուրքի հետ կապված դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը կրում է պատասխանողը: Սույն պարբերությունում սահմանված խորհրդատվական կանոնները չեն գործում վարչական դատավարությունում (սույն որոշման 24-րդ կետ):

Սույն կետում սահմանված խորհրդատվական կանոնները չեն գործում, եթե հայցվորը չի պահպանել վեճը լուծելու համար նախատեսված պարտադիր նախնական արտադատական կարգը՝ պայմանագրով նախատեսված բանակցություններ, պայմանագրով նախատեսված՝ մինչև դատարան դիմելը վարչական տույժը կամ հանրային ծառայության վարձավճարը մուծելու վերաբերյալ անձին հիշեցում (պահանջ) ուղարկելու օրենքով նախատեսված պարտադիր պահանջ և այլն:

23. Քաղաքացիական դատավարությունում գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին գրավոր համաձայնության առկայության դեպքում դատարանը վերջնական դատական ակտում պետական տուրքի հարցը լուծում է դրան համապատասխան: Եթե հաշտության համաձայնություն կնքած անձինք դատական ծախսերը բաշխելու հարցը չեն կարգավորել հաշտության համաձայնությամբ, ապա դատարանը հաշտության համաձայնություն կնքած անձանցից, որպես կանոն, պետական տուրքը գանձում է հավասարաչափ:

24. ԱՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե հայցվորը հրաժարվել է հայցից: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթի ընթացքում կողմերի հաշտության համաձայնության գալը համարվում է հայցվորի հրաժարում հայցից: Իսկ նույն օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա, եթե հայցը թողնվում է առանց քննության, կամ վարույթը կարճվում է: Բողոքը հետ վերցրած անձը կրում է դրա հետևանքով առաջացած դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը:

Ղեկավարվելով սույն կետում նշված իրավական նորմերով՝ վարչական դատավարության ընթացքում կողմերի հաշտության համաձայնության գալու դեպքում գործի վարույթը կարճելիս դատարանը պետական տուրքը գանձում է հայցվորից: ԱՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերի հիմքերով գործի վարույթի կարճման դեպքում պետական տուրքի հետ կապված դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը նույնպես կրում է հայցվորը:

25. ԱՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի հիմքերով հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու դեպքում, ինչպես նաև ԱՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 99-րդ

հողվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերի հիմքերով գործի վարույթի կարճաման դեպքում պետական տուրքի հետ կապված դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը կրում է հայցվորը (դիմողը):

Աչ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 99-րդ հոդվածի 6-րդ կետի հիմքով գործի վարույթը կարճելու դեպքում պետական տուրքը գանձվում է հայցվորից (դիմողից)՝ բացառությամբ այն դեպքի, երբ հայցվորը հայցից հրաժարվել է, քանի որ պատասխանողը հայցվորի կողմից հայցը ներկայացնելուց հետո կամավոր կատարել է հայցվորի պահանջները (սույն որոշման 22-րդ կետի 2-րդ պարբերություն):

26. Վարչական գործերով վճարման կարգադրության դեմ հակընդդեմ հայց ներկայացնելիս հայցային վարույթի անցնելու արդյունքում կայացված դատական ակտով՝

1) եթե սկզբնական հայցը (նախկին վճարման կարգադրությունը) բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը մերժվել, ապա սույն որոշման 13-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի դեպքում պետական տուրքի հարցը համարվում է լուծված, եթե վճարման ենթակա պետական տուրքը նախապես վճարվել է, իսկ վճարումը հետաձգված կամ տարածամկետված լինելու դեպքում դատարանը պետք է անդրադառնա դրան.

2) եթե սկզբնական հայցը (նախկին վճարման կարգադրությունը) մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել, ապա սույն որոշման 13-րդ կետի.

ա. 1-ին ենթակետի դեպքում՝ պետական տուրքի հարցը համարվում է լուծված՝ բացառությամբ առևտրային իրավաբանական անձանց, վերջիններիս դեպքում կիրառվում է սույն ենթակետի 2-րդ պարբերության կանոնը.

բ. 2-րդ ենթակետի դեպքում՝ սկզբնական հայցվորից հոգուտ հակընդդեմ հայցվորի գանձվում է բազային տուրքի քառապատիկի չափով պետական տուրք, եթե դրա վճարումը հետաձգված չի:

27. Եթե ներկայացվել է հայցապահանջ, որի համար հայցվորը «Պետական տուրքի մասին» Աչ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն կամ այլ հիմքով ազատված է պետական տուրքի վճարումից, ապա տվյալ գործերով հայցը մերժվելու դեպքում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված, իսկ բավարարվելու դեպքում՝ պատասխանողից հոգուտ պետական բյուջեի պետք է գանձել պետական տուրք՝ բավարարված հայցապահանջներին համամասնորեն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով տվյալ բնույթի վարույթով պետական տուրքի վճարում ընդհանրապես նախատեսված չէ:

28. Եթե հայցվորն ազատված է պետական տուրք վճարելուց, և առաջին ատյանի դատարանը նրա հայցը բավարարել է, որից հետո պատասխանողը բողոք է ներկայացրել վերադաս դատարան՝

1) բողոքն ամբողջությամբ բավարարվելու դեպքում պետական տուրքի վճարումը հետաձգված լինելու պարագայում՝ հարցը համարվում է լուծված.

2) բողոքը մասնակիորեն բավարարվելու դեպքում պետական տուրքի վճարումը հետաձգված լինելու պարագայում՝ բողոքի չբավարարված մասի համար սահմանված չափով գանձում է պետական տուրք.

3) բողոքը մերժվելու դեպքում.

ա. պետական տուրքը վճարված լինելու պարագայում՝ հարցը համարվում է լուծված,

բ. պետական տուրքի վճարումը հետաձգված լինելու պարագայում՝ պատասխանողից գանձում է պետական տուրքն ամբողջությամբ:

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼԸ

29. Դատական ծախսերի բաշխման հարցը լուծելիս դատարանը դատական ակտի եզրափակիչ մասում պետք է անդրադառնա նաև ավել վճարված պետական տուրքը վերադարձնելու հարցին:

30. «Պետական տուրքի մասին» ԱՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետով սահմանված իրավական նորմը չի տարածվում դատարան հայցադիմում, դիմում, վերաքննիչ բողոք և վճռաբեկ բողոք ներկայացրած անձանց՝ պետական տուրքի հետ կապված հարաբերությունների վրա, քանի որ նույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված է հատուկ նորմ, համաձայն որի՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ՝ դատարանների կողմից դիմումները (բողոքները) վերադարձնելու կամ դրանց ընդունումը մերժելու դեպքում:

31. Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո հայցից հրաժարվելու դեպքում պետական տուրքը ենթակա չէ վերադարձման:

32. ԱՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին կետի և ԱՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքերով գործի վարույթը կարճելու դեպքում պետական տուրքը ենթակա է լրիվ վերադարձման: Մնացած հիմքերով գործի վարույթը կարճելու դեպքերում պետական տուրքը ենթակա չէ վերադարձման:

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԸ ԲՈՒՍԱԳԱՆՁՆԵԼԸ

33. Բացառությամբ սույն որոշման 34-րդ կետով սահմանված դեպքի՝ հետաձգված կամ տարաժամկետած պետական տուրքը բռնագանձելու վերաբերյալ կատարողական թերթը դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարանն ուղարկում է դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն հետևյալ ժամկետներում՝

1) քաղաքացիական դատավարության ընթացքում՝ դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում, եթե դատական ակտը ենթակա է բողոքարկման և օրենքով սահմանված ժամկետում չի բողոքարկվել, կամ եթե դատական ակտը ենթակա չէ բողոքարկման:

2) վարչական դատավարության ընթացքում՝ ԱՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 9-րդ մասում սահմանված տասնօրյա ժամկետը լրանալուց հետո եռօրյա ժամկետում, եթե դատական ակտը ենթակա է բողոքարկման և օրենքով սահմանված ժամկետում չի բողոքարկվել, կամ եթե դատական ակտը ենթակա չէ բողոքարկման:

3) քաղաքացիական դատավարության ընթացքում՝ վերադաս դատարանից գործը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում, եթե դատական ակտի բողոքարկման առնչությամբ վերադաս դատարանի կողմից հետաձգվել կամ տարաժամկետով էլ է պետական տուրքի վճարումը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ակտն ամբողջությամբ կամ մասնակի բեկանվել և ուղարկվել է նոր քննության և պետական տուրքի հարցը ենթակա է լուծման նոր քննության արդյունքում կայացվելիք դատական ակտով:

4) վարչական դատավարության ընթացքում՝ վերադաս դատարանից գործը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում, եթե դատական ակտի բողոքարկման առնչությամբ վերադաս դատարանի կողմից հետաձգվել կամ տարաժամկետով էլ է պետական տուրքի վճարումը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ակտն ամբողջությամբ կամ մասնակի բեկանվել և ուղարկվել է նոր քննության և

պետական տուրքի հարցը ենթակա է լուծման նոր քննության արդյունքում կայացվելիք դատական ակտով: Եթե սույն ենթակետով նախատեսված հնգօրյա ժամկետի ընթացքում լրացած չի լինում ԱՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 9-րդ մասում սահմանված տասնօրյա ժամկետը, ապա՝ այն լրանալուց հետո՝ եռօրյա ժամկետում:

34. Եթե պետական տուրքը ենթակա է գանձման սնանկ ճանաչված պարտապանից, ապա դատական ակտ կայացրած առաջին ատյանի դատարանը Արցախի Հանրապետության պահանջը «Մանկության մասին» ԱՀ օրենքի համաձայն հաշվառելու համար կատարողական թերթը սույն որոշման 33-րդ կետով սահմանված ժամկետներում պետք է ուղարկի այն դատարան, որտեղ քննվել է տվյալ պարտապանի սնանկության գործը:

**ԱՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ

25 օգոստոսի 2017թ.
ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում Քաղաքացիական գործ ԸԻԴ 2656/02/16թ.
Քաղաքացիական գործ ԸԻԴ 2656/02/16թ.
Նախագահող դատավոր՝ Կ.Սաղյան
Դատավորներ՝ Հ. Աբրահամյան
Հ.Գրիգորյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք.Ստեփանակերտ 11-ին օգոստոսի 2017թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)՝
վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր	Ն.Նարիմանյանի
մասնակցությամբ՝ դատավորներ	Ա.Աբրահամյանի
	Գ.Գրիգորյանի

դռնբաց դատական նիստում, քննելով ըստ հայցի Անահիտ Բաբկենի Ավանեսյանի ընդդեմ Վազիֆ Ռոմայի Մինասյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին ԸԻԴ 2656/02/16 քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017թ. հունիսի 16-ի որոշման դեմ հայցվորի ներկայացուցիչ Վ. Հայրապետյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

2016 թվականի նոյեմբերի 21-ին Անահիտ Բաբկենի Ավանեսյանը /այսուհետ՝ նաև Հայցվոր/ հայց է ներկայացրել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան /այսուհետ՝ նաև Դատարան/ ընդդեմ Վազիֆ Ռոմայի Մինասյանի /այսուհետ՝ նաև Պատասխանող/ գումար բռնագանձելու պահանջով:

Դատարանի 2016թ. նոյեմբերի 22-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և հարուցվել քաղաքացիական գործ, իսկ 2016թ. դեկտեմբերի 19-ի որոշմամբ քաղաքացիական գործը նշանակվել է դատաքննության:

Դատարանի 2017 թվականի մարտի 22-ի վճռով հայցը մերժվել է:

Նշված վճռի դեմ 2017 թվականի ապրիլի 21-ին վերաքննիչ բողոք է բերել հայցվորի ներկայացուցիչ Վ. Հայրապետյանը:

2017 թվականի հունիսի 16-ի որոշմամբ ԼՂՀ Վերաքննիչ դատարանը /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ բողոքը մերժել է և ԼՂՀ առաջին ատյանի դատարանի /այսուհետ՝ նաև Դատարան/ 2017 թվականի մարտի 22-ի վճիռը թողել օրինական ուժի մեջ:

2017 թվականի հուլիսի 17-ին հայցվորի ներկայացուցիչ Վ. Հայրապետյանը վճռաբեկ բողոք է ներկայացրել Գերագույն դատարան:

Գերագույն դատարանի 2017 թվականի հուլիսի 28-ի որոշմամբ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Մույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վճռաբեկ բողոքի հեղինակը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ, 44-րդ, 47-րդ, 49-րդ և 113-րդ հոդվածների պահանջները, ինչը նպաստել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-123-րդ հոդվածների պահանջներին չհամապատասխանող դատական ակտ կայացնելուն:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Ըստ բողոքաբերի, գործով ձեռք բերված բավարար վերաբերելի ապացույցներով անվիճելի է այն փաստը, որ տրանսպորտային միջոցները ձեռք են բերվել և օտարվել կողմերի համատեղ ամուսնական կյանքի ընթացքում: Անվիճելի է այն փաստը, որ կողմերի միջև ամուսնական պայմանագիր կնքված չէ, իսկ օրենքով էլ այլ բան նախատեսված չէ: Հետևաբար, ամուսնության ընթացքում ամուսինների կամ նրանցից որևէ մեկի կողմից հատուցման գործարքով ձեռք բերված գույքն ամուսիններին է պատկանում ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով, որտեղ բաժինները համարվում են հավասար, որը սահմանված է օրենքով:

Ըստ բողոքի հեղինակի՝ իրենց պահանջը հիմնավորվում է հետևյալ գրավոր ապացույցներով. ամուսնության գրանցումը հավաստող վկայականով, որից դիտվում է, թե երբ են կողմերն ամուսնացել, ՃՈ պատասխան գրությամբ և կից ներկայացված փաստաթղթերով, որոնցով էլ հաստատվում է, թե երբ և ինչ իրավական հիմքով է տրանսպորտային միջոցը հաշվառվել Պատասխանողի անվամբ և երբ է այն օտարվել:

Բացի այդ, դատարանում բողոքաբերը ցուցմունք է տվել ու նաև հղում կատարել իր կողմից վարկային միջոցներ ներգրավելու և այդ գումարներով ևս մեքենաներ ձեռք բերելու մասին, ինչպես նաև ցուցմունք է տվել այն մասին, որ ինքը հավանություն չի տվել իր նախկին ամուսնու կողմից տրանսպորտային միջոցների օտարման գործարքներին, որոնք օտարվել են առանց իրեն տեղյակ պահելու և առանց իր համաձայնության:

Նշվածների հաշվառմամբ էլ ակնհայտ է դառնում, որ սույն գործով վերաբերելի ապացույցները հանդիսանում են ՃՈ կողմից տրամադրված փաստաթղթերը, ամուսնությունը և ամուսնալուծությունը հավաստող վկայականները և բողոքաբերի ցուցմունքը:

Շարադրելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 43-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածները, բողոքաբերը նշել է, որ Պատասխանողը հայցադիմումի պատասխանով չի առարկել իրենց ներկայացրած փաստարկների դեմ, այլ պատասխանից հետևում է, որ նա իրեն համարում է օրենքի շրջանակներում գործած: Պատասխանողը Դատարան չի ներկայացել, ցուցմունք չի տվել ու որևէ այլ ապացույց չի ներկայացրել:

Դատարանն իրավացիորեն անվիճելի է համարել, որ կողմերի միջև ամուսնական պայմանագիր կնքված չէ, սակայն իրավական խնդրին սխալ լուծում տալու արդյունքում մերժել է հայցը, իսկ Վերաքննիչ դատարանն անհիմն կերպով Դատարանի վճիռը թողել է օրինական ուժի մեջ:

Շարադրելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 113-րդ, 121-րդ հոդվածները, բողոքաբերը նշում է, որ ստորադաս դատարանը չի գնահատել ապացույցները, չի պարզել գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները, ճիշտ չի բաշխել ապացուցման բեռը ու ճիշտ չի որոշել գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը: Ստորադաս դատարանի կողմից պատճառաբանված ու օրինական չէ դատական ակտը:

Շարադրելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածը, բողոքաբերը նշել է, որ դատարանը գործը քննելիս պարտավոր է գործի ապացույցները հետազոտել անմիջականորեն՝ ծանոթանալ գրավոր ապացույցներին, գննել իրեղեն ապացույցները, լսել փորձագետների եզրակացությունները, վկաների ցուցմունքները և գործին մասնակցող անձանց ցուցմունքները:

Իսկ վերոհիշյալ և գործով հաստատված փաստեր դիտարկվածների համատեքստում էլ ակնհայտ է, որ ստորադաս դատարանները խախտել են օրենսդրության նշված պահանջները, որին ի դեպ նպաստել է նաև դատական ակտերում անհիմն կիրառված և սխալ մեկնաբանված իրավանորմերի կիրառելի դիտարկելը և հայցադիմումում նշված իրավանորմերն անհիմն չկիրառելը:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը: Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն

օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:

Տվյալ դեպքում Պատասխանողի կողմից անօրինական՝ առանց Հայցվորի համաձայնության և իմացության, մեքենաները օտարվելու հետևանքով, Հայցվորը գրկվել է՝ իր սեփականությունը իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրավունքներից, իսկ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «Համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինվում է բոլոր մասնակիցների համաձայնությամբ, անկախ այն բանից, թե մասնակիցներից ով է կնքում գույքը տնօրինելու գործարքը», սակայն միևնույն ժամանակ համատեղ սեփականության մյուս մասնակցին չի գրկում գույքի՝ իր բաժնի արժեքը իր հայեցողությամբ օգտագործելու, տիրապետելու և տնօրինելու իրավունքից, իսկ այն դեպքում, երբ գույքի արժեքը բացակայում է, քանի որ Պատասխանողը միանձնյա է այն տնօրինել, Հայցվորը միանշանակ իրավունք է ձեռք բերում իրեն հասցված վնասը, իր գույքի պակասեցումը պահանջելու այն անձից, ով իր հաշվին անհիմն հարստացել է:

Փաստորեն ստացվել է այնպես, որ հայցվորը գրկվել է իր սեփականությունից, սակայն դատարանի գործողությունների պատճառով կարող է գրկվել նաև իր գույքի արժեքը ստանալու իրավունքից, քանի որ նույն սեփականության օբյեկտ հանդիսացող գումարը չի հասնում սեփականատիրոջը, հետևաբար վնաս է կրում սեփականատերը, ուստի և նա իր գույքի արժեքը կարող է ստանալ բացառապես սույն պահանջի շրջանակներում: Իսկ դատարանի այն հետևությունը, թե գույքն առկա է, թե ո՛չ, կանխի՞կ, թե անկանխիկ է պահվում, գտնում է, որ այս դեպքում կարևոր չէ, քանի որ գումարը միանձնյա տնօրինելով, Պատասխանողն արդեն իսկ առաջացրել է անհիմն հարստացման հիմքը:

Գերագույն դատարանը բազմիցս նշել է, որ դատական ակտի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի, որի հիման վրա Դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլև պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքաբերը խնդրել է բողոքարկվող մասով բեկանել Վերաքննիչ դատարանի 2017թ. հունիսի 6-ի որոշումը և փոփոխել՝ կայացնելով նոր դատական ակտ հայցն ամբողջությամբ բավարարելու մասին կամ բեկանել բողոքարկվող որոշումը և գործն ուղարկել Դատարան՝ լրիվ ծավալով նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ԱԲ 008397 ամուսնության վկայականի համաձայն՝ Վազիֆ Մինասյանի և Անահիտ Ավանեսյանի ամուսնությունը գրանցվել է 08.12.2010թ., որի վերաբերյալ Ստեփանակերտի ՔԿԱԳ բաժնում կատարվել է 446 համարի տակ գրանցում:

2. ԱԲ 026420 ամուսնալուծության վկայականի համաձայն Վազիֆ Մինասյանի և Անահիտ Ավանեսյանի ամուսնալուծությունը գրանցվել է 25.10.2016թ., որի վերաբերյալ Ստեփանակերտի ՔԿԱԳ բաժնում կատարվել է 68 համարի տակ գրանցում:

3. 18.03.2015թ. կնքված տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Վազիֆ Մինասյանն իրեն սեփականության իրավունքով պատկանող «MITSUBISHI AIRTREK 2.4» մակնիշի ավտոմեքենան 800.000 ՀՀ դրամով վաճառել է Լևոն Հովհիկյանին:

4. 18.03.2015թ. կնքված տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Վազիֆ Մինասյանը Ջոհրաբ Մկրտչյանից 700.000 ՀՀ դրամով գնել է վերջինիս սեփականության իրավունքով պատկանող «VAZ 21214» մակնիշի ավտոմեքենան:

5. 22.06.2015թ. կնքված տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Վազիֆ Մինասյանն իրեն սեփականության իրավունքով պատկանող «VAZ 21214» մակնիշի ավտոմեքենան 2.530.000 ՀՀ դրամով վաճառել է «ԲԵՅՁ ՄԵԹԸԼՍ» ՓԲ ընկերությանը:

6. 05.09.2016թ. կնքված տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Վազիֆ Մինասյանը Գևորգ Տերտերյանից 500.000 ՀՀ դրամով գնել է վերջինիս սեփականության իրավունքով պատկանող «VAZ 21053» մակնիշի ավտոմեքենան: ԼՂՀ ոստիկանության ՃՈ պետի 02.11.2016թ. թիվ 4039 գրության համաձայն՝ նշված ավտոմեքենան հաշվառումից հանվել է 06.09.2016թ.՝ սեփականատիրոջ փոփոխության հետ կապված:

7. ԼՂՀ ոստիկանության ՃՈ պետի 02.11.2016թ. թիվ 4039 գրության համաձայն՝ Վազիֆ Մինասյանի անվամբ 21.02.2009թ. հաշվառված էր «VW GOLF» մակնիշի ավտոմեքենա, որը 09.11.2011թ. հաշվառումից հանվել է՝ սեփականատիրոջ փոփոխության հետ կապված:

8. 29.11.2011թ. Անահիտ Ավանեսյանի և «Արցախբանկ» ՓԲ ընկերության միջև կնքվել է քարտային հաշվին վերականգնվող վարկային գծի տրամադրման պայմանագիր, համաձայն որի՝ բանկն Ա. Ավանեսյանին է տրամադրել է 600.000 ՀՀ դրամ գումարի սահմանաչափով վերականգնվող վարկային գիծ՝ մինչև 29.05.2013թ. մարման պայմանով:

9. Կողմերի միջև ամուսնական պայմանագիր չի կնքվել:

10. Ըստ Հայցվորի՝ 2015թ. ապրիլ ամսից ապրում են առանձին և պատասխանող Վագիֆ Մինասյանը տրանսպորտային միջոցների վաճառքից ստացված գումարները տնօրինել է միայնակ ու ոչ մի ֆինանսական ներդրում կամ ծախս չի կատարել ընտանիքի կարիքները հոգալու համար:

4.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Գերագույն դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնության և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքով Գերագույն դատարանի առջև բարձրացված են հետևյալ իրավական հարցերը.

1) արդյոք ամուսիններից մեկի կողմից նրանց ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքն օտարելու արդյունքում ստացված դրամական միջոցների նկատմամբ մյուս ամուսինն ու՞նի ընդհանուր սեփականության իրավունք, և

2) արդյոք այդ դրամական միջոցների՝ որպես ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող գույքի, բաժանման հայցով ենթակա՞ է ապացուցման այդ դրամական միջոցների առկայության փաստը:

ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ ամուսինների ընդհանուր համատեղ սեփականության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքով, ինչպես նաև ամուսինների միջև կնքված ամուսնական պայմանագրով:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 202-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մինչև ամուսնությունն ամուսիններից յուրաքանչյուրի գույքը, ինչպես նաև ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքը նրա սեփականությունն է:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անհատական օգտագործման գույքը /հագուստը, կոշիկը և այլն/, բացառությամբ թանկարժեք իրերի և պերճանքի առարկանների, եթե նույնիսկ այն ձեռք է բերվել ամուսնության ընթացքում՝ ամուսինների ընդհանուր միջոցների հաշվին, համարվում է այն ամուսնու սեփականությունը, որն այդ գույքն օգտագործել է:

Նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ ամուսինների միջև կնքված համապատասխան պայմանագրի բացակայության դեպքում ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը, անկախ նրանից, թե այն որ ամուսինն է ձեռք բերել, ձեռք է բերվել ընդհանուր, թե ամուսիններից մեկին պատկանող միջոցներով, ստեղծվել է կամ պատրաստվել երկուսի, թե մեկի կողմից, ում

անունով է ձևակերպված, միննույն է, հանդիսանում է ամուսինների համատեղ սեփականությունը:

Վերը նշված հոդվածի իմաստով բացառություն է կազմում այն գույքը, որն ամուսիններից յուրաքանչյուրն ունեցել է մինչև ամուսնությունը, ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքը, անհատական օգտագործման առարկաները, ինչպես նաև սեփականաշնորհմամբ ձեռք բերված գույքը:

Գերագույն դատարանը հարկ է համարում հավելել, որ օրենսդիրը, նախատեսելով «գույք» հավաքական եզրույթը, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանափակումներից բացի, այլ բացառություն չի նախատեսել, հետևաբար ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող գույքային զանգվածի կազմում կարող են ներառվել նաև դրամական միջոցները:

Դրամը՝ որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ, ունի որոշակի առանձնահատկություններ: Մասնավորապես՝ մի դեպքում դրամը կարող է հանդիսանալ քաղաքացիական իրավահարաբերությունների ինքնուրույն, մեկ այլ դեպքում՝ որպես այդ հարաբերությունների համարժեքային/ էկվիվալենտային/ օբյեկտ:

Գերագույն դատարանը, հաշվի առնելով վերոնշյալ առանձնահատկությունը, գտնում է, որ ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող գույքային զանգվածի կազմում դրամական միջոցները կարող են ներգրավվել՝ ուղղակիորեն, օրինակ՝ որպես ամուսիններից մեկի աշխատավարձ, հոնորար, շահաբաժին կամ այլ եկամուտ:

անուղղակիորեն, որպես այդ գույքային զանգվածի կազմի մեջ մտնող մեկ այլ գույքի համարժեք, օրինակ՝ ամուսինների համատեղ սեփականությունը հանդիսացող գույքի վաճառքից ստացված դրամական միջոցները:

Վերջինիս պարագայում, ըստ էության, տեղի է ունենում ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող մի գույքի փոխակերպում մեկ այլ գույքով:

ԼՂՀ ընտանեկան օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական կարգով ամուսնալուծվելիս, ինչպես նաև անկախ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնալուծվելիս ամուսինները կարող են դատարան ներկայացնել համաձայնություն այն մասին, թե նրանցից ում հետ են ապրելու երեխաները, երեխաներին հոգալու կարգի և /կամ/ անաշխատունակ անապահով ամուսնուն պահելու համար ապրուստի միջոցները հոգալու կարգի, այդ միջոցների չափերի կամ ամուսինների ընդհանուր գույքի բաժանման մասին: Նույն հոդվածի 2-րդ մասի «գ» կետի համաձայն՝ ամուսինների միջև համաձայնության բացակայության դեպքում դատարանը պարտավոր է ամուսինների /ամուսիններից մեկի/ պահանջով կատարել նրանց ընդհանուր սեփականությունը հանդիսացող գույքի բաժանումը:

Վկայակոչած հոդվածի՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածի հետ փոխկապակցված վերլուծությունից հետևում է, որ ամուսինների ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքը կարող է բաժանվել, ինչպես ամուսնության ընթացքում, այնպես էլ՝ ամուսնալուծվելուց հետո:

Գերագույն դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում ամուսիններից որևէ մեկի կողմից ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքի բաժանման պահանջ ներկայացնելիս՝ որպես գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստ պետք է հիմնավորվի բաժանման ենթակա գույքի առկայությունը, այսինքն՝ այն, որ բաժանման ենթակա գույքն օբյեկտիվ իրականությունում գոյություն ունի:

Ընդ որում, վերոհիշյալ փաստի ապացուցման բեռը և դրանից բխող բացասական հետևանքները, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի համաձայն, կրում է այդ փաստը վկայակոչող կողմը:

Միաժամանակ, Գերագույն դատարանը հարկ է համարում հավելել, որ յուրաքանչյուր կոնկրետ վերոնշյալ փաստը պարզելիս դատարանները պետք է հաշվի առնեն նաև բաժանման ենթակա գույքի տեսակը և առանձնահատկությունները:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ ամուսինների համատեղ սեփականությանը հանդիսացող գույքի օտարման արդյունքում ստացված դրամական միջոցները բաժանելու պահանջ ներկայացված լինելու դեպքում դատարանը պետք է պարզի հետևյալ փաստական հանգամանքները.

1.

ե՞րբ է օտարվել ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող գույքը՝ ամուսնության ընթացքում, թե՞ դրանից հետո,

2. ամուսիններից ո՞ւմ կողմից է օտարվել նրանց համատեղ սեփականություն հանդիսացող գույքը,

3. ամուսիններից ո՞վ է ձեռք բերել նրանց համատեղ սեփականությունը հանդիսացող գույքի օտարման արդյունքում ստացված դրամական միջոցները,

4. առկա են արդյո՞ք /գոյություն ունի արդյո՞ք/ ամուսինների համատեղ սեփականությունը հանդիսացող գույքի օտարման արդյունքում ստացված դրամական միջոցները,

5. ի՞նչ չափով և ի՞նչ եղանակով են պահվում ամուսինների համատեղ սեփականությունը հանդիսացող գույքի օտարման արդյունքում ստացված դրամական միջոցները /կանխիկ, թե՞ անկանխիկ/:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հայցվորի և Պատասխանողի ամուսնությունը գրանցվել է 08.12.2010թ., իսկ ամուսնալուծությունը գրանցվել՝ 25.10.2016թ.:

Համատեղ ամուսնական կյանքի ընթացքում՝ 2010-2016 թվականներին, ամուսինները Վազիֆ Մինասյանի անվամբ ձեռք են բերել և նույն ժամանակահատվածում օտարել են երեք ավտոմեքենա՝ որոնցից առաջինի և երկրորդի «MITSUBISHI AIRTREK 2.4» և «VAZ 21214» մակնիշի ավտոմեքենաների վաճառքի գինը կազմել է համապատասխանաբար՝ 800 հազար և 2 մլն. 530 հազար ՀՀ դրամ, երրորդ՝ «VAZ 21053» մակնիշի ավտոմեքենան նույն ժամանակահատվածում՝ 2016թ. սեպտեմբերի 5-ին գնվել է 500 հազար ՀՀ դրամով, իսկ հաջորդ օրը կատարվել է սեփականատիրոջ անվանափոխություն, սակայն ստորադաս դատարանները չեն պարզել օտարման գինը, հանգամանք, որն էական նշանակություն ունի

կողմերի միջև ծագած վեճը ճիշտ լուծելու համար, ու պարզված չէ նաև այն վաճառվել է, թե՞ նվիրվել:

Գործով հաստատված է, որ ավտոմեքենաների վաճառքից ստացված գումարները ստացել է Պատասխանողը, ով Դատարան ներկայացված հայցադիմումի պատասխանում հայտնել է այն մասին, որ նշված դրամական միջոցները ծախսվել են համատեղ ամուսնական կյանքի ընթացքում՝ ընտանիքի կարիքները հոգալու համար, իսկ Հայցվորի բացատրության համաձայն՝ 2015թ. ապրիլ ամսից իրենք ապրում են առանձին ու Պատասխանողն այդ ընթացքում որևէ ֆինանսական ներդրում և ծախս չի կատարել երեխաների ապրուստը հոգալու համար, իսկ համատեղ սեփականություն հանդիսացող ավտոմեքենաներն օտարվել են Պատասխանողի կողմից առանց իր համաձայնության և իմացության:

Դատարանը նման հանգամանքներում մերժել է հայցը, իսկ Վերաքննիչ դատարանը, մերժելով Պատասխանողի ներկայացուցչի վերաքննիչ բողոքն ու օրինական ուժի մեջ թողնելով Դատարանի վճիռը, համաձայնել է Դատարանի դիրքորոշման հետ և գտել է, որ Դատարանը թույլ չի տվել դատական ակտը բեկանելու համար հիմք հանդիսացող՝ գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ:

Գերագույն դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները կողմերի միջև ճիշտ չեն բաշխել ապացուցման բեռի պարտականությունը, չեն հստակեցրել, թե դատավարության որ կողմի վրա է դրվում գործի համար էական նշանակություն ունեցող փաստերի ապացուցման բեռը, տվյալ պարագայում Վազիֆ Մինայանը պետք է ապացուցեր, որ Հայցվորի համաձայնությամբ է համատեղ ամուսնական կյանքի ընթացքում ձեռք բերված գույքն օտարվել, ինչպես նաև Պատասխանողը պետք է ապացուցեր այն, որ օտարված գույքի 1/2 մասի գումարը փոխանցել է Հայցվորին կամ ծախսել է ընտանիքի կարիքների համար, ինչը, սակայն, չի կատարվել նրա կողմից:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ արդարադատության և կողմերի շահը պահանջում է, որպեսզի գործի փաստական կազմը, այսինքն՝ գործն ըստ էության ճիշտ լուծելու համար նշանակություն ունեցող բոլոր իրավաբանական փաստերը պարզվեն սպառիչ լրիվությամբ: Այդ առումով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա: Այսինքն՝ մրցակցային քաղաքացիական դատավարությունում դատարանը զբաղեցնում է դատական ղեկավարման և ոչ թե պասիվ դիտորդի դեր:

Քաղաքացիական գործերով ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնը սահմանված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասում, համաձայն որի՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Ապացուցման պարտականությունը բաշխելու նշված ընդհանուր կանոնը չի գործում, երբ այն օրենքով /հատուկ կանոնով/ դրվում է որոշակի կողմի վրա, կամ երբ օրենքում ուղղակի ցուցում չլինելու դեպքում, ապացուցման պարտականությունը դրվում է այն կողմի վրա, ով իր շահերից ելնելով, կարող էր կամ պարտավոր էր իրեն ապահովել անհրաժեշտ

ապացույցներով /ապացուցողական ենթադրություն կամ պրեզումպցիա/: Ի տարբերություն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածում նշված ապացուցման չենթակա հանրահայտ և նախադատելի փաստերի ապացուցողական ենթադրություններն ապացուցման պարտականությունից ազատում են միայն վարույթի կողմերից մեկին, իսկ մյուս կողմը կարող է ապացույցներ ներկայացնել և հերքել ապացուցողական ենթադրությունը, ապացուցել, որ այն իրականում գոյություն չունի:

Վերոնշված դատավարական կանոնները, միննույն ժամանակ, դատարանին չեն ազատում գործի հանգամանքների ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատելու՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված պարտականությունից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նույն օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ նույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Ամփոփելով վերոգրյալը՝ Գերագույն դատարանը գտնում է, որ սույն գործով Դատարանը գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն չի իրականացրել, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները ամբողջությամբ չեն պարզվել, կողմերի միջև ճիշտ չի բաշխվել ապացուցման բեռը, որպիսի խախտումներն անտեսվել են Վերաքննիչ դատարանի կողմից, ինչն էլ անվիճելիորեն կարող էր ազդել գործի ելքի վրա: Հետևաբար՝ հիմնավոր են վճռաբեկ բողոքի փաստարկները ԼՂՀ քաղաքացիական դատավարության 43-րդ, 44-րդ, 47-րդ, 49-րդ, 113-րդ, 121-123-րդ հոդվածների պահանջները ստորադաս դատարանների կողմից խախտելու մասին:

Սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Գերագույն դատարանը, հաշվի առնելով, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, ինչը կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման, գտնում է, որ առկա է սույն գործի նոր քննության անհրաժեշտություն՝ վերը նշված հանգամանքները պարզելու և գնահատելու համար:

5. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

Նույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով վեճը վերջնական լուծում չի ստացել, Գերագույն դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցին անհրաժեշտ է անդրադառնալ գործի նոր քննության արդյունքներով:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ ԼՂՀ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցվորի ներկայացուցիչ Վ. Հայրապետյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017թ. հունիսի 16-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքներով:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴՍՏԱՎՈՐ՝
Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ
ստորագրություն

ԴՍՏԱՎՈՐ՝
Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ստորագրություն

ԴՍՏԱՎՈՐ՝
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
ստորագրություն